Վիվա-ՄՏՍ
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, 22
Հեռ.՝ +37460771111, +37493568777
Ֆաքս՝ +37493298021

“MTS Armenia” CJSC
4/1 Argishti street, Yerevan 0015, RA
Tel.: +37460771111, +37493568777
Fax: 93298021
www.mts.am, info@mts.am

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

SOCIAL INVESTMENTS

VIVA MTS

ՀԱՏՈՐ/EDITION 17

VIVA MTS

Արմեն Ավետիսյան
Վիվա-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

Armen Avetisian
Viva-MTS General Director

Սիրելի ընթերցող,

Ձեզ ենք ներկայացնում Վիվա-ՄՏՍ-ի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի տարեգրքի արդեն տասնյոթերորդ հատորը: Իրականացված և շարունակվող ծրագրերի ամենամյա ամփոփումը թերևս կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մեր մոտեցումները վերաիմաստավորելու և վերաարժևորելու առիթ է: Իսկապես, ինչո՞ւ ենք մենք արդեն գրեթե երկու տասնամյակ հետևողականորեն կյանքի կոչում սոցիալական պատասխանատվության բազմաթիվ նախագծեր:

Վիվա-ՄՏՍ-ի համար կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությունը յուրաքանչյուր մարդու, հասարակության և մեր երկրի կյանքում դրական տեղաշարժերին ու առաջընթացին նպաստող պայմաններ ստեղծելու հնարավորություն է: Այն նաև հնարավորություն է ապացուցելու, որ ընկերությունները կարող են առաջնորդվել ոչ միայն սեփական, այլև հանրային շահերով՝ թե ընդհանուր կազմակերպության թե անհատապես յուրաքանչյուր աշխատակցի կենսակերպի մակարդակում:

Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի առաջատար Վիվա-ՄՏՍ-ի համար առանձնակի նշանակություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաներն ու այդ դինամիկ բնագավառում իրագործվող նախաձեռնությունները, որոնցից շատերի երկարամյա աջակիցն ու գործընկերն է մեր ընկերությունը: Վիվա-ՄՏՍ-ը նաև մեծապես կարևորում է գիտահեն կրթության, ժամանակակից առողջապահության, մշակութային և բազմաթիվ այլ նախաձեռնությունները:

Ավելին, ընկերությունն իր սեփական կենսագործունեության բազմաթիվ ուղղություններով ներդրել է կորպորատիվ պատասխանատու մոտեցումներ. աստիճանաբար մեծացվում է արևային էներգիայով սնուցվող բազային կայանների թիվը, իրականացվում է օգտագործվող վառելիքի և այլ ռեսուրսների օգտագործման վերահսկողություն, իսկ ընկերության փաստաթղթաշրջանառության համար օգտագործված և այլևս ոչ պիտանի թուղթը հավաքվում և հանձնվում է վերամշակման:

Համոզված եմ, որ Վիվա-ՄՏՍ-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարության շրջանակում իրականացվող ծրագրերը շարունակական բնույթ կկրեն՝ ի նպաստ բոլորիս: Ավելին, ես հույս ունեմ, որ մեր օրինակը վարակիչ կլինի բազմաթիվ ընկերությունների համար:

Dear reader,

Welcome to the 17th issue of the Corporate Social Responsibility yearbook. Summing up the completed and ongoing projects is an opportunity to reflect on and reassess our approaches to Corporate Social Responsibility. Indeed, why have we been consistently implementing numerous projects in that direction for almost two decades now?

Corporate Social Responsibility for Viva-MTS is an opportunity to facilitate the creation of grounds for a better life for our people, our society, and our country, as a whole. It is also a chance to prove that companies are able to be guided by the public good in as much as their own interests, whether in their activities as organizations or individually, through the lifestyles of their employees.

Armenia's leading telecommunications operator Viva-MTS gives a pivotal role to the sphere of information technologies and the initiatives implemented in that dynamic sphere, and has actively been supporting those programs by cooperating with many of them for years. Viva-MTS also puts significant emphasis on science-based education, modern healthcare, cultural and many other initiatives.

Furthermore, the Company has embraced corporately responsible practices in a wide range of its operations: this includes a gradual increase in the number of base stations powered by solar energy, control over the use of fuel and other resources, as well as collection of discarded paper used for the Company's document circulation for recycling.

I am confident that the projects implemented as part of the Viva-MTS CSR strategy will be continuous for the benefit of all of us. I also hope we will serve as an example for many other companies.

Viva-MTS General Director
Armen Avetisian

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ

- Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը

Կրթություն

- Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին
- Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին
- Համագործակցություն «Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի հետ
- «Viva University» / «Viva Start» կրթական ծրագրի կազմակերպում

Առողջապահություն

- Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
- Աջակցություն «Աուտիզմ» ազգային հիմնադրամին

Շրջակա միջավայրի պաշտպանություն

- Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
- Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ

Մշակույթ

- Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին

Մարզեր

- Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին

Այլ

- Արյան դոնորություն՝ Վիվա-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից

Information and Communication Technologies

- Support to the initiative “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT”

Education

- Support to Smart Solutions Laboratories
- Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House
- Cooperation with “Armenian On-line Media and Journalists Association” NGO
- Organization of the education program “Viva University” / “Viva Start”

Healthcare

- Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families
- Support to “Autism” National Fund

Environmental Protection

- Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
- Cooperation with the “My Forest Armenia” environmental non-governmental organization

Culture

- Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO

Regions

- Support to community infrastructure development programs in the regions of Armenia

Other

- Blood donation by Viva-MTS staff

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES

Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը

Մեծապես արժևորելով տեխնոլոգիաների դերը՝ Վիվա-ՄՏՍ-ը 13 տարի անընդմեջ բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 պետական մրցանակի աջակիցն է: Այս տարի մրցանակը շնորհվել է «Adobe»-ի նախագահ, գլխավոր գործադիր տնօրեն Շանթանու Նարայենին, որը Վիվա-ՄՏՍ կատարած այցի ընթացքում ընդգծեց Հայաստանում հետագա տեխնոլոգիական աճի հեռանկարները բացահայտելու իր մեծ ցանկությունը:

Support to the initiative “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT”

Valuing the pivotal role of technology, Viva-MTS has been supporting the State award of RA for global contribution to Humanity through high-tech for 13 years in a row. This year the laureate is Shantanu Narayen, the Chair and Chief Executive Officer of “Adobe”. During his visit to Viva-MTS, Mr. Narayen expressed his profound interest in exploring opportunities for further technological growth in Armenia.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

EDUCATION

Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին

2019-ին սկսված ծրագիրը շարունակում է ընդլայնվել: Դեռևս 4 տարի առաջ Վիվա-ՄՏՍ-ի և S2S գործատուների միության աջակցությամբ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում հիմնադրվեց «Խելացի լուծումների կենտրոնը», որում այժմ համատեղվում են աշխատանքային միջավայրը և վերանորոգված, ժամանակակից սարքավորումներով հագեցած 8 լաբորատորիաները: Եվս 4-ը վերանորոգման փուլում են:

Այս նախաձեռնությունը համահունչ է Վիվա-ՄՏՍ-ի միանգամից երկու թիրախային նպատակներին՝ ապագա սերնդի կրթության որակի բարձրացմանը և նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը:

Support to Smart Solutions Laboratories

The program initiated in 2019 is continuing to expand. 4 years ago, with the support of Viva-MTS and UEICT, a “Smart Solutions Center” was established at the National Polytechnic University of Armenia: now the co-working environment there is equipped with 8 state-of-the-art laboratories; another 4 are currently in the process of renovation.

This initiative aligns with two target objectives of Viva-MTS: enhancing the quality of education for the future generations and introducing innovative technologies.

Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին

Վիվա-ՄՏՍ-ը Եվրոպական Միության և «Քաթըլիսթ» հիմնադրամի հետ մեկտեղ օժանդակել են Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրի երրորդ շրջափուլի իրականացմանը:

8 ստարտափներ 4 ուղղություններում՝ կրթական և առողջապահական տեխնոլոգիաներ, արհեստական բանականություն և ժամանց, 14-շաբաթյա մենթորության ծրագիր՝ խորհրդատվություն ռազմավարության ստեղծման, անհատական աճի և բիզնեսում հաջողություններ գրանցելու շուրջ, և ի վերջո՝ զգալի նվաճումներ: Վիվա-ՄՏՍ-ը այս և նման այլ նախաձեռնություններով ժամանակակից կայուն հասարակության ստեղծման լավագույն օրինակ է ցույց տալիս:

Support to Armenia Startup Academy’s “Traction” program and “Hero House”

Viva-MTS collaborated with the European Union and the “Catalyst” Foundation to support the third round of the “Traction” program of Armenia Startup Academy. 8 startups in 4 directions: education and health technologies, artificial intelligence, and entertainment; a 14-week mentorship program: guidance on strategy development, personal growth, and business success, resulting in notable achievements. With such initiatives, Viva-MTS provides the best example of creating a sustainable and progressive society.

Համագործակցություն «Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի հետ

Վիվա-ՄՏՍ-ը և «Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ն հարթակ են ստեղծել ավագ դպրոցի աշակերտների համար, որոնք հետաքրքրված են տեխնոլոգիաներով և ցանկանում են ստարտափներ հիմնել: Ծրագրի շրջանակում ոլորտի լավագույն մասնագետները դասախոսություններ ու աշխատարաններ են ունեցել աշակերտների հետ՝ նրանց փոխանցելով իրենց փորձն ու գիտելիքները, ծանոթացնելով ոլորտի նրբություններին, ինչպես նաև մշակել-բարելավելով աշակերտների նախագծերը: Բացի այդ՝ գործընկերները դրամական պարգևներով փորձել են խրախուսել լավագույն առաջարկներով հանդես եկած մասնակիցներին:

Cooperation with “Armenian On-line Media and Journalists Association” NGO

Viva-MTS and the “Armenian On-line Media and Journalists Association” NGO have jointly established a platform for high school students interested in technology and aspiring to launch startups. Within the scope of the program, leading experts conducted lectures and workshops, sharing their knowledge and expertise, acquainting students with the field’s nuances, and contributing to the enhancement of their projects. Beyond this, the partners motivated the participants who came up with innovative ideas with monetary rewards.

«Viva University» / «Viva Start» կրթական ծրագրի կազմակերպում

Վիվա-ՄՏՍ-ը առանձնահատուկ նշանակություն է տալիս նոր սերունդների կրթության որակի բարելավմանը և փորձում իր ներդրումն ունենալ ապագայի կերտման այդ կենսական գործում: «Viva University» կրթական ծրագրով հայաստանյան բուհերի բազմաթիվ ուսանողներ գործնական հմտությունների ձեռքբերման հնարավորություն են ստացել տեղեկատվական տեխնոլոգիաների, վաճառքի և բաժանորդների սպասարկման ոլորտներում: Նրանցից լավագույն արդյունք գրանցածները նաև ստացել են Վիվա-ՄՏՍ-ում աշխատելու հնարավորություն:

Organization of the education program “Viva University” / “Viva Start”

Viva-MTS places particular importance on enhancing the education of new generations and actively contributes to this vital task of building the future.
“Viva University” education program enables students of Armenian universities to acquire practical skills in IT, sales, and customer service. Those with the best results also got the opportunity to work at Viva-MTS.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

HEALTHCARE

Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին

Դեռևս 2016թ.-ից Վիվա-ՄՏՍ-ը և «ՍՈՐՍ» հիմնադրամը կարևոր ջանքեր են գործադրում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցելու համար: Մասնագիտական աջակցություն տրամադրող անհատական օգնականներն էապես փոխում են այդ ընտանիքների առկա իրականությունը: Լուծվում են ոչ միայն երեխաների սոցիալացման, ինքնուրույնության և առողջ մտածողության ձևավորման, նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խնդիրները, այլև ընտանիքում և դրանից դուրս՝ մայրիկների ինքնադրսևորման ու աշխատանքային զբաղվածության հարցերը: Վիվա-ՄՏՍ-ի և «ՍՈՐՍ» հիմնադրամի գործընկերության կարևոր ձեռքբերումներից է նաև երիտասարդների շրջանում նեղ մասնագիտական ուղղվածության ձևավորումը: Վերապատրաստված, աշխատանքային պրակտիկա անցած բոլոր մասնագետները, փորձի հիման վրա կարողանում են իրենց տեղը գտնել նաև ոլորտային մեծ կենտրոններում: Անհատական օգնականները կատարում են դայակ-խնամողի գործառույթ կամ գործում են որպես զարգացման մասնագետ:

Support to “SOURCE” Foundation for children with disabilities and their families

Starting from 2016, Viva-MTS and “SOURCE” Foundation have dedicated to supporting children with disabilities and their families. Personal assistants who provide professional support have made a significant impact on the lives of these families. Numerous issues have been solved: children’s socialization, independence, and healthy thinking, problems requiring narrow professional skills, self-expression and employment of mothers within and beyond the family. Another notable achievement of the partnership between Viva-MTS and “SOURCE” Foundation is the development of professional specialization among young people. Through training and practical experience, these specialists are able to find their place in large social support centers, as well. Personal assistants perform a variety of functions such as those of nannies, caretakers, and development specialists.



Համագործակցություն «Աուտիզմ» ազգային հիմնադրամի հետ

«Աուտիզմ» ազգային հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ ապահովվել է «Իմ ուղին» սոցիալ-հաբիլիտացիոն, կրթական և մասնագիտական ուսուցման ցերեկային կենտրոնի անխափան աշխատանքը: Կենտրոնի 200 սաները հնարավորություն են ստացել անվճար օգտվելու տարատեսակ թերապիաներից, մասնագիտական հմտությունների ուսուցման, ինչպես նաև հոգեբանական և հոգեբուժական ծառայություններից:

Cooperation with “Autism” National Fund

Viva-MTS’s cooperation with the “Autism” National Fund has helped to ensure seamless operation of “My way” socio-habilitation, educational and vocational training day care center. The center’s 200 beneficiaries got the opportunity to get various therapies, engage in vocational training programs, as well as get psychological and psychiatric services.



ՄՇԱԿՈՒՅԹ

CULTURE

Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին

Վիվա-ՄՏՍ-ը 2011թ -ից ի վեր «Ունիսոն» ՀԿ-ին կից գործող «Փարոս» կամերային երգչախմբի գլխավոր գործընկերն է: Երգչախումբը ներառական է: Այն շուրջ երեք տասնամյակ կամերային երաժշտությունը լավագույն կերպով ներկայացրել է թե Հայաստանի և թե արտերկրի մեծ բեմերում: Ստեղծման 30 տարվան ընդառաջ «Փարոս»-ը հոբելյանական համերգ է ունեցել՝ ի աջակցություն Արցախից բռնի տեղահանված, հաշմանդամություն ունեցող մեր հայրենակիցներին:

Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO

Since 2011, Viva-MTS has been the main partner of “Paros” Chamber Choir functioning under “Unison” NGO. The choir is inclusive. It has delivered exceptional performances on stages both in Armenia and abroad for over three decades. Ahead of the 30th anniversary of the choir’s establishment, “Paros” held a jubilee concert in support of our compatriots with disabilities from Artsakh.



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ENVIRONMENTAL PROTECTION

Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին

Վիվա-ՄՏՍ-ը և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը կիսում են Հայաստանի հարուստ բնությունը պահպանելու և համայնքների կայուն տնտեսական զարգացումն ապահովելու գաղափարները: Ավելի քան 17 տարվա գործընկերները իրենց նախաձեռնություններում առաջնորդվում են երկարաժամկետ արդյունք ունենալու հեռանկարով՝ ընդգծելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կենսական նշանակությունը:

Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Viva-MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) align their shared goal of preserving Armenia's rich nature and ensuring sustainable economic development in communities. The partners of more than 17 years are driven by the commitment to achieving lasting results and highlight the vital role of corporate social responsibility.

Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» կազմակերպության հետ

Վիվա-ՄՏՍ-ը բնապահպանական գործունեություն է ծավալում հիմնադրման օրվանից ի վեր: 2022թ.-ից «Իմ անտառ Հայաստան» կազմակերպության հետ համագործակցության շրջանակում ընկերությունը մասնակցել է երկրում անտառային տարածքների պահպանման և ընդլայնման նախաձեռնությանը:

Cooperation with the organization “My Forest Armenia”

Viva-MTS has been carrying out environmental activities since the day of its establishment. As part of cooperation with the organization “My Forest Armenia” starting from 2022, the Company has contributed to the preservation and expansion of forest areas in the country.



ՄԱՐԶԵՐ

REGIONS

Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը

Վիվա-ՄՏՍ-ի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի գործընկերությունը կայուն զարգացման ապահովման տեսանելի արդյունքներ է գրանցում: Բազմաթիվ ծրագրերի միջոցով գործընկերները հաջողել են արդի տեխնոլոգիաների, այդ թվում՝ էլեկտրական «հովվիվների» կիրառմամբ և էներգախնայող համակարգերի ներդրմամբ համայնքներում զարգացնել ենթակառուցվածքները՝ միևնույն ժամանակ նպաստելով բնության պահպանմանը:

Support in developing infrastructures in the regions of Armenia

The cooperation between Viva-MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets has visible results in ensuring sustainable development. Through numerous projects, the partners have succeeded in developing community infrastructures by applying modern technologies such as electric fences and installing energy-saving systems, at the same time contributing to environmental conservation.



U3L

OTHER

Արյան դոնորություն՝ Վիվա-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ինչպես մեր ընկերության, այնպես էլ մեր յուրաքանչյուր աշխատակցի արժեհամակարգի կարևոր տարր է: Այս անգամ Վիվա-ՄՏՍ-ի մի խումբ աշխատակիցներ այն դրսևորել են՝ միանալով Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի կազմակերպած «Մեկը հինգ հազարից» նախաձեռնությանը, որի նպատակն է համալրել 22 արյան բանկը: Նման նախաձեռնությունների միջոցով մենք շարունակում ենք հավատարիմ մնալ մեր որդեգրած արժեքներին՝ փորձելով դրական ազդեցություն ունենալ մեր երկրի բնակիչների կյանքում:

Blood donation by Viva-MTS staff

Corporate Social Responsibility is a crucial part of the value system of both our Company and each of our employees. This time, a group of Viva-MTS employees showcased it by joining “One in five thousand” initiative organized by the Yeolyan Hematology Center. The goal of the initiative is to replenish the RA blood bank. As we continue to prioritize corporate social responsibility, these initiatives are to make positive impact in our community and beyond.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ 09

- Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը

Կրթություն 13

- Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին
- Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին
- Համագործակցություն «Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի հետ
- «Viva University» / «Viva Start» կրթական ծրագրի կազմակերպում

Առողջապահություն 23

- Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
- Աջակցություն «Աուտիզմ» ազգային հիմնադրամին

Մշակույթ 29

- Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին

Շրջակա միջավայրի պաշտպանություն 33

- Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
- Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ

Մարզեր 39

- Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին

Այլ 43

- Արյան դոնորություն՝ Վիվա-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից

TABLE OF CONTENTS

Information and Communication Technologies 09

- Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative

Education 13

- Support to Smart Solutions Laboratories
- Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House
- Cooperation with “Armenian On-line Media and Journalists Association” NGO
- Organization of the education program “Viva University” / “Viva Start”

Healthcare 23

- Support to “SOURCE” Foundation for children with disabilities and their families
- Support to “Autism” National Fund

Culture 29

- Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO

Environmental Protection 33

- Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
- Cooperation with the “My Forest Armenia” environmental non-governmental organization

Regions 39

- Support to community infrastructure development programs in the regions of Armenia

Other 43

- Blood donation by Viva-MTS staff